Աւելի ճչում էին, քան երգում ու արագ անցնում էին piano-ից forto, ու հակառակը: Առհասարակ իմ տպաւորութիւնս այն էր, որ ճապոնուհիների երաժշտական զգացումը թոյլ է:



ԳԷՅՇԱՆԵՐ

Գէյշաների մէջ կային մի քանի շատ փոքրեր:

Սրանցից մէկը, մօտ 11-12 տարեկան, մասնաւորապէս աչքի էր ընկնում իր աշխուժով ու չարաճճիութեամբ: Նրա նշաձեւ աչիկները խելք ու ծաղր էին առկայծում: Մի վայրկեան անգամ հանգիստ չէր նստում մի տեղը. դառնում